ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՆՑ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՊԵՍ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը, որը գտնվում է ք.Երևան, Մ.Ադամյան-1 հասցեում, ստորև ներկայացնում է ՀՀ-ՖՆ-ԲԸԱՀ-ԾՁԲ-15/1 ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգով գնումներ կատարելու ընթացակարգի արդյունքում 2015թ-ի փետրվարի 18-ին կնքված ՀՀ-ՖՆ-ԲԸԱՀ-ԾՁԲ-15/1 ծածկագրով պայմանագրում 2015թ-ի նոյեմբերի 18-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ: Անհրաժեշտություն է առաջացել ավելացնել Պայմանագրի գինը:

Փոփոխության նկարագրություն: Փոփոխվել է Պայմանագրի գինը և ավելացվել է Պայմանագրի գումարը 200 000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամով, այն սահմանվելով 1 200 000 (մեկ միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ և խմբագրվել է պայմանագրի 4.1. կետը հետևյալ խմբագրությամբ՝

Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը չի կարող գերազանցել 1 200 000 (մեկ միլիոն) ՀՀ դրամը, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները: Ծառայության մատուցման միավոր գները սահմանված է սույն Պայմանագրի N 1.1 հավելվածում:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

Փոփոխվել է գնման պայմանագրի N-2 Հավելվածը՝ Վճարման ժամանակացույցը և հաստատվել է նոր խմբագրությամբ:

Ավելացված 200 000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամի՝ Կատարողի կողմից մատուցվելիք ծառայությունների կատարման ժամկետը սահմանվել է մինչև 2015 թվականի դեկտեմբերի 25-ը:

Փոփոխության հիմնավորում: ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 10-ի N 168-Ն որոշման 60-րդ կետի 2-րդ մաս:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Գ.Ղազարյանին:

Հեռախոս՝ 011 800 117:

Էլ. փոստ՝ gugks@mail.ru:

Պատվիրատու՝ **ՀՀ ֆինանսների նախարարություն**

Համաձայնագիր-1
18.02.15թ. կնքված N ՀՀ-ՖՆ-ԲԸԱՀ-ԾՁԲ-15/1 գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք. Երևան «18» Հոկտեմբերի 2015թ.

ՀՀ ֆինանսների նախարարությունը այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի ղեկավար Ա.Արզումանյանի մի կողմից, և «Մարկիզա Շիկ» ՍՊԸ-ն, այսուհետ՝ «Կատարող», ի դեմս ընկերության տնօրեն Ս.Դալլաքյանի մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 18.02.15թ. կնքված N ՀՀ-ՖՆ-ԲԸԱՀ-ԾՁԲ-15/1 գնման պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 7.3-րդ կետը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Կողմերը որոշեցին՝

1.1 Փոփոխել Պայմանագրի գինը և ավելացնել Պայմանագրի գումարը 200 000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամով, այն սահմանելով 1 200 000 (մեկ միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ և խմբագրել պայմանագրի 4.1. կետը հետևյալ խմբագրությամբ՝

Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը չի կարող գերազանցել 1 200 000 (մեկ միլիոն) ՀՀ դրամը, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները: Ծառայության մատուցման միավոր գները սահմանված է սույն Պայմանագրի N 1.1 հավելվածում:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

1.2 Փոփոխել գնման պայմանագրի N-2 հավելվածը՝ Վճարման ժամանակացույցը և հաստատել նոր խմբագրությամբ /կցվում է/:

1.3 Սույն համաձայնագրի 1.1 կետով ավելացված 200 000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամի՝ Կատարողի կողմից մատուցվելիք ծառայությունների կատարման ժամկետը սահմանել մինչև 2015 թվականի դեկտեմբերի 25-ը:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3. Սույն պայմանագրում կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4. Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված է հայերեն լեզվով, /երկու/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Պատվիրատու	**Կատարող**
ՀՀ ֆինանսների նախարարություն	''Մարկիզա Շիկ'' ՍՊԸ
ք.Երևան, Մ.Ադամյան-1	ք.Երևան, Արարատյան 60/7
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն	'Ակբա Կրեդիտ Ագրիկոլ բանկ'' ՓԲԸ
Հ/Հ 900013202016, 900013574018	Հ/Հ 220090121678000
ՀԿՀՀ 02629081	ՀԿՀՀ 02234873
ՀՀ ՖՆ աշխատակազմի ղեկավար՝	''Մարկիզա Շիկ'' ՍՊԸ-ի տնօրեն՝
Ա.Արզումանյան	**Ս.Դալլաքյան**
_____	_____
(ստորագրություն)	
Կ.Տ.	Կ.Տ.

Հաստատված է
«18» փետրվարի 2015թ. կնքված
N ՀՀ-ՖՆ-ԲԸԱՀ-ԾՁԲ-15/1
գնման պայմանագրի փոփոխությամբ

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության անվանումը	Բյուջետային ծախսերի տնտ. դասակ. հոդվածը*	Նախատեսվում է ֆինանսավորել 2015թ. ՀՀ պետական բյուջեի միջոցներով նախատեսված հատկացումների հաշվին, ըստ ամիսների՝ ընդ որում												
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Ընդամենը Տարի
Բեռնափոխադրման ծառայություններ	4239		250 000	250 000	500 000	500 000	500 000	750 000	750 000	750 000	1 000 000	1 000 000	1 000 000	1 000 000

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության անվանումը	Բյուջետային ծախսերի տնտ. դասակ. հոդվածը*	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ ՖՆ 2015թ. արտաբյուջետային միջոցներով նախատեսված հատկացումների հաշվին, ըստ ամիսների՝ ընդ որում												
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Ընդամենը Տարի
Բեռնափոխադրման ծառայություններ	4239											200 000	200 000	**200 000**

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

Պատվիրատու
ՀՀ ֆինանսների նախարարություն
ք. Երևան, Մ.Ադամյան-1
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900013202016, 900013574018
ՀՎՀՀ 02629081
ՀՀ ՖՆ աշխատակազմի ղեկավար՝

Ա.Արզումանյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Կատարող
''Մարկիզաշիկ'' ՍՊԸ
ք.Երևան, Արարատյան 60/7
'Ակբա Կրեդիտ Ագրիկոլ բանկ'' ՓԲԸ

Հ/Հ 220090121678000
ՀՎՀՀ 02234873
''Մարկիզաշիկ'' ՍՊԸ-ի տնօրեն՝

Ս.Դալլաքյան
(ստորագրություն)
Կ.Տ.